

Ս. Յակոբ Առաքելորդական Մայր Եկեղեցի

Մութրեալ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳԻ

(Վճարչաբար)

ՈՏՔԻ

ՔՀՆՅ. - Օրհնեալ է մեր Տէրն՝ Յիսուս Քրիստոս։ Ամէն։

Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ։ Թող գայ արքայութիւնդ. թող կատարուի քու կամքդ. ինչպէս երկնքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ։ Ամենօրեայ մեր հացը այսօ՛ր եւս մեզի տուր։ Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են։ Եւ թոյլ մի՛ տար, որ փորձութեան մէջ իյնանք. այլ՝ մեզ չարէն ազատէ՛։ Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը։ Ամէն։

Ապա անմիջապէս կը շարունակէ՝

Թող մարդասէրն Աստուած իր բարերար կամքին հաճութեամբը ընդունի մեր սաղմոսերգութիւններն ու աղաչանքները. մեր մեղքերուն եւ բազմաթիւ յանցանքներուն թողութի՛ւն շնորհէ, չարիքներէն փրկէ՛, մեղքերէն հեռո՛ւ պահէ։ Եւ իրեն փա՛ռք յաւիտեանս։ Ամէն։

ԴՊ. - Խորունկ, անհասկնալի եւ անսկիզբ խորհուրդ, ով Աստուած, որ վերին թագաւորութիւնը զարդարեցիր իբրեւ հարսնարան Անմատչելի Լոյսին՝ Քրիստոսի, եւ գերապանծ փառքով զարդարեցիր հրեղէններուն դասերը *։

(* Այս երգը կը բաղկանայ 8 համարներէ, որոնց սկզբնատառերը հեղինակին անունը՝ «Խաչատուր» կը ցուցնեն)։ Նարունակելով՝

Երկնաւոր Թագաւոր, Եկեղեցիդ անսասա՛ն պահէ. Եւ քեզ պաշտողները պահէ խաղաղութեան մէջ։

ՔՀՆՅ. - Սրբուհի Աստուածածնին բարեխօսութեամբ, Տէ՛ր, ընդունէ՛ մեր աղաչանքը եւ փրկէ՛ մեզ։

ՍՊԿ. - Ս. Աստուածածինը եւ բոլոր սուրբերը բարեխօս դարձնենք Հօր քով, որ երկնքն է, որպէսպի յօժարի մեզի ողորմիլ, եւ գթալով փրկէ մեզ՝ իր ստեղծածները։ Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի։

ՔՀՆՅ. - Տէր, ընդունէ՛ մեր աղաչանքները՝ սուրբ Աստուածածնին, քու Միածին Որդիիդ անարատ ծնողին բարեխօսութեամբ, եւ խնդրանքովը բոլոր սուրբերուն. եւ այսօրուայ յատուկ շնորհքովը։ Լսէ՛ մեզ, Տէ՛ր, եւ ողորմէ՛ մեզի։ Ներէ՛, քաւէ՛, եւ թողութիւն շնորհէ մեր մեղքերուն։ Արժանի ըրէ շնորհակալութեամբ փառաւորելու քեզ, Որդիիդ եւ Ս. Հոգիիդ հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Մեղանչեցի Աստուծոյ առջեւ։ Կը խոստովանիմ՝ Աստուծոյ, Սրբուհի Աստուածածնին, բոլոր սուրբերուն եւ ձե՛ր առջեւ, հայրեր եւ եղբայրներ, գործած բոլոր մեղքերս. որովհետեւ

մեղանչեցի մտածումով, խօսքով եւ գործով: Այո՛, մեղանչեցի. կ'աղաչեմ, Աստուծմէ թողութիւն խնդրեցէք ինձի համար:

Կղերական մը կը պատասխանէ.

Թող Հզօրն Աստուած ողորմի քեզի եւ թողութիւն շնորհէ անցեալ թէ ներկայ բոլոր յանցանքներուդ. ապագայ մեղքերէն փրկէ, եւ բարեգործութեան մէջ հաստատէ քեզ, ու հանդերձեալ կեանքի հանգիստին արժանացնէ: Ամէն:

ՔՀՆՅ. - Մարդասէրն Աստուած թող ձե՛զ եւս ազատէ եւ թողութիւն շնորհէ ձեր բոլոր յանցանքներուն. թող առիթ տայ՝ ապաշխարելու եւ բարիք գործելու, եւ Ս. Հոգիին շնորհներով ուղղէ ձեր յառաջիկայ կեանքը, ինք՝ որ հզօրն է եւ ողորմածը. յաւիտեանս փա՛ռք իրեն: Ամէն:

ԴՊ. - Մե՛զ ալ յիշէ Աստուծոյ Անմահ Գառնուկին առջեւ:

ՔՀՆՅ. - Պիտի յիշե՞մ ձեզ Աստուծոյ Անմահ Գառնուկին առջեւ:

Երկու դպիր փոխասացութեամբ կ'արտասանեն 100-րդ Սաղմոսը.

- Տիրո՛ջ աղաղակեցէք, ամբողջ աշխարհ: Ուրախութեամբ ծառայեցէք Տիրոջ:

- Ցնծութեամբ եկէք անոր ներկայութեան: Գիտցէ՛ք թէ Տէրը ինքն է Աստուածը:

- Ա՛ն մեզ ստեղծեց եւ մենք անո՛րն ենք. իր ժողովուրդն ենք, այն հօտը՝ որ ի՛նք կ'արածէ:

- Գոհաբանութեամբ մտէք անոր տաճարը, օրհներգութեամբ մտէք անոր շրջափակէն

ներս:

- Շնորհակալութիւն յայտնեցէք իրեն, օրհներգեցէ՛ք իր անունը:

- Բարի է Տէրը, անիկա յաւէտ ողորմած է: Եւ բոլոր սերունդներուն կը ցուցաբերէ իր հաւատարմութիւնը:

- Փառք Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին:

- Այժմ եւ միշտ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սրկ. - Ս. Եկեղեցին ապաւինելով աղաչենք Տիրոջ, որ անով մեզ ազատէ մեր մեղքերէն, եւ փրկէ իր ողորմութեամբը:

Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ՔՀՆՅ. - Այս տաճարին մէջ կանգնած, երկիւղածութեամբ կ'երկրպագենք աստուածակիր սրբութիւններուն եւ լուսապայծառ այս սրբատեղիին առջեւ, օրհնելով եւ փառաւորելով քու սուրբ, հրաշալի եւ յաղթող յարութիւնդ (կամ ըստ օրուան խորհուրդին): Եւ գոհութիւն եւ փառք կու տանք քեզի, Հօր եւ Ս. Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Եւ կը բարձրանայ Ս. Խորան ըսելով՝

ՔՀՆՅ. - Թող Սեղանիդ դիմաց կանգնիմ, ո՛վ Աստուած, դուն՝ որ զիս կ'ուրախացնես մանկութեանս մէջ:

Սրկ. - Արդարութիւն ըրէ ինձի, ո՛վ Աստուած, եւ իրաւունքս պաշտպանէ:

ՔՀՆՅ. - Անպարկեցտ մարդոցմէ, նենգաւոր ու անիրաւ մարդոցմէ փրկէ՛ զիս:

Սրկ. - Դո՛ւն ես նեցուկս, ո՛վ Աստուած, ինչո՞ւ համար զիս կ'անտեսես, ինչո՞ւ համար տրտում ըլլամ երբ թշնամիս կը նեղէ զիս:

ՔՀՆՅ. - Տէ՛ր, լոյսդ եւ ճմարտութիւնդ զրկէ, որպէսզի զիս առաջնորդեն եւ հանեն քու սուրբ լեռդ, տաճարդ՝ ուր կը բնակիս:

Սրկ. - Հոն՝ Սեղանիդ քով պիտի գամ, ո՛վ Աստուած, դուն՝ որ զիս կ'ուրախացնես մանկութեանս մէջ:

ՔՀՆՅ. - Եւ քնարով գովերգեմ քեզ, ո՛վ Աստուած, իմ Աստուածս:

Սրկ. - Արդ, ալ ինչո՞ւ կը տիրիս, ո՞վ իմ անձս, կամ ինչո՞ւ կը խռովիս. Աստուծո՛յ յուսա եւ դարձեալ գովերդէ զայն ըսելով. «Իմ Փրկիչս Աստուած է»:

Քհնյ. - Փառք Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին:

Սրկ. - Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ: Օրհնենք մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ արժանի ըրաւ փառաբանութեան այս վայրը գալու եւ հոգեւոր այս երգերը երգելու:

Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Քհնյ. - Այս սուրբ յարկին եւ փառաբանութեան այս վայրին մէջ, որ հրեշտակներու բնակարան է եւ մարդոց՝ քաւութեան վայր, երկիւղածութեամբ կը խոնարհինք եւ կ'երկրպագենք աստուածակիր այս սրբութիւններուն եւ լուսապայծառ Ս. Սեղանին առջեւ կ'օրհնենք եւ կը փառաւորենք քու սուրբ, հրաշալի եւ յաղթող յարութիւնդ (կամ ըստ օրուան խորհուրդին), եւ երկնային գօրքերուն հետ միասին օրհնութիւն եւ փառք կ'ընծայենք քեզի՝ Հօր եւ Ս. Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՆՍՏԻԼ

Սրկ. - Օրհնէ՛, Տէր:

Քհնյ. - Որովհետեւ քո՛ւկդ են՝ գթութիւնը, կարողութիւնը եւ մարդասիրութիւնը, զօրութիւնը եւ փառքը՝ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Եւ Ս. Սեղանը կը վարագուրեն. օրուան պատշաճ տաղը կամ մնդեդին կ'երգուի:

ՈՏՔԻ

Կը բանան վարագոյրը եւ քահանան խնկարկելով կ'իշնէ ժողովուրդին մէջ եւ կը շրջի, մինչ դպիրները կ'երգեն օրուան պատշաճ խնկարկութեան կամ թափօրի շարականը:

Սրկ. - Օրհնէ՛, Տէ՛ր:

Քհնյ. - Օրհնեա՛լ ըլլայ Հօր եւ Որդիին եւ Ս. Հոգիին թագաւորութիւնը. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դպիրները կ'երգեն օրուայ ժամամուտը. առհասարակ՝

Միածին որդի, եւ Բանդ Աստուած եւ անմահ էութիւն, որ յանձն առիր մարմնանալ Ս. Աստուածածնէն եւ միշտ Կոյսէն. դուն, ով անփոփոխելի Քրիստոս Աստուած մեր, մարդ եղար եւ խաչուեցար, մահով յաղթեցիր մահուան. դուն որ մին ես Ս. Երրորդութենէն, փառակից Հօր եւ Ս. Հոգիին, փրկէ՛ մեզի:

Սրկ. - Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ:

Ընդունէ՛, Տէ՛ր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Օրհնէ՛, Տէ՛ր:

Քհնյ. - Օրհնութիւն եւ փառք Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Խաղաղութիւն բոլորիդ:

Դպ. - Նաեւ քո՛ւ հոգիիդ:

Սրկ. - Աստուծոյ երկրպագենք:

Դպ. - Քեզի կ'երկրապագենք, Տէ՛ր:

Քհնյ. - Տէ՛ր, մեր Աստուածը, կարողութիւնդ անքննելի է եւ փառքդ՝ անճանաչելի. սէրդ անչափ է եւ գթութիւնդ՝ անսահման: Քու առատ մարդասիրութեամբդ նայէ՛ այս ժողովուրդին, որ

Քուկդ է, եւ այս Ս. Տաճարին. ու առատօրէն քու սէրդ եւ գլխութիւնդ պարգեւէ մեզի, այլեւ մեզի հետ աղօթողներուն: Որովհետեւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Այստեղ դպիրները օրուան յատուկ ձաշու Փոխը եւ շարականը կը սկսին երգել: Ապա՝

ՔՀՆՅ. - Որովհետեւ յաւիտենապէս քուկդ է կարողութիւնը, զօրութիւնը եւ փառքը: Ամէն:

Սրկ. - Ուշադիր ըլլանք:

Դպիրները օրուան խորհուրդին համաձայն կ երգեն Երեխորբեան երգը: Առհասարակ՝

Դպ. - Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ. որ մեռելներէն յարութիւն առիր.

Պղորմէ՛ մեզի: (Երեք անգամ):

Սրկ. - Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ :

Դպ. - Պղորմէ՛, Տէր :

Սրկ. - Աշխարհի խաղաղութեան եւ Ս. Եկեղեցւոյ հաստատութեան համար աղաչենք Տիրոջ :

Տիրոջ :

Դպ. - Պղորմէ՛, Տէր :

Սրկ. - Բոլոր սուրբ եւ ուղահաւատ եպիսկոպոսներուն համար աղաչենք Տիրոջ:

Դպ. - Պղորմէ՛, Տէր :

Սրկ. - Մեր սրբազնագոյն հայրապետին՝ Տէր Տէր (այս անուն) կաթողիկոսին արեւշատութեան եւ հոգիի փրկութեան համար աղաչենք Տիրոջ :

Դպ. - Պղորմէ՛, Տէր : Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛ մեզի: Պղորմէ՛, Տէր: Քեզի կը յանձնուինք: Պղորմէ՛, Տէր: Պղորմէ՛, Տէր: Պղորմէ՛, Տէր:

ՔՀՆՅ. - Որովհետեւ ողորմած եւ մարդասէր ես, ո՞վ Աստուած, Քեզի՛ կը վայելեն փառքը իշխանութիւնն ու պատիւը. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն :

ՆՍՏԻԼ

Կը կարդան Մարգարեական ու Առաքելական գիրքերը:

Ապա Դպիրները օրուան պատշաճ Մեսեղիքը կ'երգեն:

Յարութեան Կիրակիներու Մեսեղիք մը:

Դպ. - Ալէլուիա, Ալէլուիա: Աստուած յարութիւն առաւ եւ իր բոլոր թշնամիները ցրուեցան: Իր ատելիները իր ներկայութենէն փախան:

ՈՏՔԻ

Սրկ. - Ալելուիա՛, ոտքի՛:

ՔՀՆՅ. - Խաղաղութիւն բոլորիդ :

Դպ. - Նաեւ քո՛ւ հոգիիդ:

Սրկ. - Երկիւղածութեա՛մք մտիկ ըրէք:

ՔՀՆՅ. - Յիսուս Քրիստոսի Սուրբ Աւետարանը ...ի համաձայն:

Դպ. - Փա՛ռք քեզի, ո՞վ Տէր, մեր Աստուածը:

Սրկ. - Ուշադիր ըլլանք:

Դպ. - Աստուած կը խօսի:

Սարկաւագը կը կարդայ օրուայ Աւետարանը:

Դպ. - Փա՛ռք քեզի, ո՞վ Տէր, մեր Աստուածը:

Եւ կ'արտասանեն «Նիկիական» դաւանութիւնը:

Կը հաւատանք մէկ Աստուածոյ, Ամենակալ Հօր, որ արարիչն է երկինքին ու երկրին, երեւելի եւ աներեւոյթ ստեղծուածներուն:

Կը հաւատանք մէկ Տէր Յիսուս Քրիստոսի, Աստուծոյ Որդիին, որ Հօր Աստուծմէ ծնած է որպէս միակ ծնունդ՝ այսինքն՝ Հօր էութենէն է:

Աստուծ է՝ Աստուծմէ ծնած, Լոյս է՝ Լոյսէն յառաջ եկած: Ճշմարիտ Աստուծմէ ծնած ճշմարիտ Աստուծ է, եւ ոչ՝ արարած: Անիկա Հօր բնութենէն է: Իրմով ստեղծուած է ամէն ինչ որ կայ երկինքի մէջ եւ երկրի վրայ, երեւելի թէ աներեւոյթ:

Ինքն էր որ մեղի՝ մարդերուս, եւ մեր փրկութեան համար երկինքէն իջաւ եւ մարմին առաւ, մարդացաւ, Ս. Հոգիին ներգործութեամբ Ս. Կոյս Մարիամէն ծնելով որպէս կատարեալ մարդ՝ մարմինով, հոգիով եւ միտքով, եւ ամէն ինչով որ մարդկային է. ոչ թէ երեւութապէս, այլ ճշմարտապէս:

Զարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմինով երկինք ելաւ եւ Հօր աջ կողմը նստաւ:

Վերստին պիտի գայ, նոյն մարմնով եւ Հօր փառքով, ողջերն ու մեռածները դատելու, ան՝ որուն թագաւորութիւնը անվախճան է:

Կը հաւատանք անեղ եւ կատարեալ Ս. Հոգիին, որ խօսեցաւ Օրէնքին, մարդարէներուն եւ Աւետարաններուն ընդմէջէն. որ Յորդանան գետին վրայ իջաւ, առաքեալներուն ուսուցանեց եւ սուրբերուն մէջ բնակեցաւ:

Կը հաւատանք նաեւ Մէկ, Ընդհանրական եւ Առաքելական Ս. Եկեղեցիին. մէկ մկրտութեան, ապաշխարութեան. մեղքերու քաւութեան եւ թողութեան. մեռելներու յարութեան, հոգիներու եւ մարմիններու յաւիտենական դատաստանին, երկինքի արքայութեան հաստատումին եւ յաւիտենական կեանքին:

Սրկ. - Իսկ անոնք որ կ'ըսեն՝ Կար ժամանակ մը, երբ չկար Որդին, կամ կար ժամանակ մը, երբ չկար Ս. Հոգին, կամ կ'ըսեն թէ՝ Ոչինչէն ստեղծուեցան կամ ուրիշ էութենէ մը գոյացան Աստուծոյ Որդին եւ կամ Ս. Հոգին, եւ թէ՝ Փոփոխութեան կամ այլայլումի ենթակայ են. Ընդհանրական եւ Առաքելական Ս. Եկեղեցին կը նզովէ այնպիսիները:

Քհնյ. - Բայց մենք փառաւորենք Այն՝ որ յաւիտեաններէն առաջ է, երկրպագելով Ս. Երրորդութեան՝ որ մէկ Աստուծ է. Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն :

ՆՍՏԻԼ

Սրկ. - Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ:

Դպ. - Ողորմէ՛, Տէ՛ր:

Սրկ. - Մանաւանդ հաւատքով աղաչենք եւ խնդրենք, որ մեր Տէրը, մեր Աստուծը եւ փրկիչը՝ Յիսուս Քրիստոս այս պաշտամունքը եւ աղօթքները ընդունուելու արժանի համարէ: Աղաչենք, որ Տէրը լսէ մեր ձայնը, ընդունի մեր սրտաբուխ խնդրանքները, ներէ մեր յանցանքները եւ ողորմի մեզի. որ միշտ մեր աղօթքներն ու խնդրանքները հասնին իրեն՝ մեր Մեծ Տիրոջ, եւ ինք մեզ արժանի դարձնէ միասնաբար, մէկ հաւատքով եւ բարի գործերով աշխատելու՝ արդարութեան համար: Խնդրենք, որ ողորմի եւ իր շնորհները տայ մեզի:

Ամենակալ Տէր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի :

Դպ. - Փրկէ՛, Տէր: Շնորհէ՛, Տէր: Շնորհէ՛, Տէր: Շնորհէ՛, Տէր: Ողորմէ՛, Տէր: Քեզի կը յանձնուինք: Ողորմէ՛, Տէր: Ողորմէ՛, Տէր: Ողորմէ՛, Տէր:

Քհնյ. - Որպէսպի արժանի ըլլանք գոհութեամբ փառաւորելու քեզ, Հօր եւ Ս. Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Խաղաղութիւն բոլորիդ:

Դպ. - Նաեւ քո՛ւ հոգիիդ:

Սրկ. - Աստուծոյ երկրպագենք:

Դպ. - Քեզի՛ կ'երկրպագենք, Տէր:

Քահանան ձեռքերը տարածած, բարձրածայն կ'ըսէ.

Քրիստոս, մեր փրկչչը, ամրապնդէ մեզ քու խաղաղութեամբդ, որ կարելի չէ միտքով հասկնալ ու խօսքով բացատրել, եւ ամէն չարիքէ աներկիւղ պահէ : Մեզ քու ճշմարիտ երկրպագուներուդ կարգին դասէ, որոնք հոգիով եւ ճշմարտութեամբ կ'երկրպագեն քեզի՛: Որովհետեւ Ամենասուրբ Երրորդութեանդ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Օրհնեալ է մեր Տէրն՝ Յիսուս Քրիստոս. ամէն:

Սրկ. - Օրհնէ՛, Տէր:

Քհնյ. - Տէր Աստուծած, օրհնէ՛ բոլորը:

Դպ. - Ամէն:

Սրկ. - Զըլլայ որ անկնունք, անհաւատ, անապաշխար կամ անմաքուր ոեւէ մէկը մօտենայ աստուծային այս խորհուրդին :

Դպ. - Տիրոջ Մարմինն է, փրկչին Արիւնն է ահա դրուած մեր դիմաց: Երկնային զօրքերը անդադար կ'երգեն, ըսելով. Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ ես, տիեզերքի Տէր:

Սրկ. - Դպիրներ, սաղմոս երգեցէք մեր Տէր Աստուծոյ, քաղցր ձայնով հոգեւոր երգեր երգեցէք :

ՈՏՔԻ ԵԼԼԵԼ

Սրբասացութիւն: Առհասարակ՝

Դպ. - Հրեշտակներու յատուկ կարգերով լեցուցիր քու Ս. Եկեղեցիդ, ով Աստուծած, հազար հազարաւոր հրեշտակապետներ քու դիմացդ կը կանգնին եւ միլիոնաւոր հրեշտակներ կը պաշտեն քեզ, ով Տէր : Եւ սակայն դուն ուզեցիր որ մարդիկ կը օրհներգեն քեզ՝ խորհրդաւոր ձայնով, ըսելով. Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ ես, տիեզերքի Տէր:

Սրկ. - Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ:

Դպ. - Ողորմէ՛, Տէր:

Սրկ. - Մանաւանդ հաւատքո՛վ, սրբութեամբ եւ երկիւղո՛վ աղօթքի կանգնինք Աստուծոյ այս Ս. Սեղանին առջեւ, եւ ոչ թէ գայթակղալից խիղճով, նենգութեամբ ու խորամանկութեամբ, պատրանքով ու խարեբայութեամբ, երկմտութեամբ ու թերահաւատութեամբ: Այլ՝ ուղիղ վարքով, պարզ միտքով, անկեղծ սրտով, կատարեալ հաւատքով, սիրով լեցուած եւ ամէն տեսակի բարի գործերով հարստացած աղօթքի կանգնինք Աստուծոյ այս Ս. Սեղանին առջեւ, եւ մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի յայտնութեան օրը, Երկրորդ Գալստեան ատեն, ողորմութիւն գտնենք իրմէ: Տէրը թող փրկէ մեզ եւ ողորմէ մեզի:

Դպ. - Փրկէ՛, Տէր, եւ ողորմէ մեզի:

Քհնյ. - Փրկէ մեզ՝ մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի շնորհներովն ու մարդասիրութեամբը. որուն հետ միասին քեզի՛ Հօրդ եւ Ս. Հոգիիդ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: Խաղաղութիւն բոլորիդ :

Դպ. - Նաեւ քու հոգիիդ:

Սրկ. - Աստուծոյ երկրպագենք:

Դպ. - Քեզի կ'երկրպագենք, Տէ՛ր:

Սրկ. - Սուրբ համբոյրով ողջունեցէք իրար: Իսկ դուք՝ որ չէք կրնար հաղորդուիլ աստուածային խորհուրդին, դուրս ելէք եւ հոն աղօթեցէք:

Դպ. - Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ. ինքը՝ Աստուած՝ հոս բազմեցաւ. խաղաղութեան կանչը հնչեց, սուրբ ողջոյն տալ հրահանգեց: Եկեղեցին մէկ անձ դարձաւ, համբոյրով՝ կապն ամբողջացաւ. թշնամութիւնը հեռացաւ, բոլորին սէր սփռուեցաւ: Արդ, բոլորս մէկ բարձրածայն օրհնութիւն տանք միաբերան՝ միասնական Աստուածութեան, որուն սրովքէք ներբող կու տան:

Տաղաւար տօներուն հետեւեալը կ'ըստի.

Սրկ. - Դուք՝ որ հաւատքով կանգնած էք արքայական այս Ս. Սեղանին դիմաց, տեսէք բազմած Քրիստոս արքան, եւ զինք շրջապատող զօրքերն վերնական:

Դպ. - Մեր աչքերը քեզի կը բարձրացնենք, եւ այս պաղատանքը կը ներկայացնենք, ըսելով. «Մեր մեղքերը մի՛ յիշեր, այլ գթութեամբդ քաւէ՛»: Հրեշտակներուն եւ սուրբերուդ հետ միասին կ'օրհներգենք քեզ, Տէ՛ր, փա՛ռք քեզի :

ՆՍՏԻԼ

Սրկ. - Երկիւղով եւ պատկառանքով կանգնինք եւ ուշադրութեամբ նայինք:

Դպ. - Քեզի՛, ով Աստուած:

Սրկ. - Պատարագուղը Քրիստոս է, Աստուծոյ անարատ Գառնուկը:

Դպ. - Անիկա ողորմութիւն է եւ խաղաղութիւն, եւ մեր գոհութեան պատարագը:

ՔՀԱՅ. - Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին շնորհները, սէրը եւ աստուածային սրբացուցիչ զօրութիւնը ձեզի՝ բոլորիդ հետ ըլլայ:

Դպ. - Ամէն: Նաեւ քու հոգիիդ:

Սրկ. - Դոները, դռները փակեցէք, եւ ամբողջապէս կեղրոնացած ուշադրութեամբ եւ աստուածավախութեամբ ձեր միտքերը վեր բարձրացուցէք՝ այս աստուածային խորհուրդին:

Դպ. - Մեր մտքերը քեզի բարձրացուցած ենք, Ամենակալ Տէ՛ր:

Սրկ. - Եւ ամբողջ սրտով գոհութիւն յայտնեցէք Տիրոջ:

Դպ. - Արդար եւ իրաւ:

ՈՏՔԻ ԵԼԼԵԼ

ՔՀԱՅ. - Եւ շնորհեց, որ սերովքէներուն եւ քերովքէներուն ձայնակցելով՝ քու սրբութիւնդ երգենք ու եղանակենք, բարձրաղաղակ գոչելով եւ ըսելով.

Դպ. - Սուրբ, սուրբ, սուրբ ես, տիեզերքի Տէ՛ր: Երկինք ու երկիր փառքովդ են լեցուն: Օրհնութիւն քեզի, բարձունքներուն մէջ: Օրհնեալ ես դուն, որ Տիրոջ անունով կու գաս: Ովսաննա բարձունքներուն մէջ:

ՔՀԱՅ. - Առէք, կերէք, ասիկա ԻՄ ՄԱՐՄԻՆՍ է, որ ձեզի եւ շատերուն համար կը բաշխուի, մեղքերու քաւութեան եւ թողութեան համար:

Դպ. - Ամէն:

ՔՀԱՅ. - Խմեցէք ասկէ բոլորդ. ասիկա նոր ուխտի ԻՄ ԱՐԻՒՆՍ է, որ ձեզի եւ շատերուն համար կը թափուի, մեղքերու քաւութեան եւ թողութեան համար:

Դպ. - Ամէն: Երկնաւոր Հայր, որ քու Որդիիդ մահուան տուիր՝ մեր մեղքերուն պարտքը վճարելու համար: Անոր թափած արեան միջնորդութեամբ կ'աղաչենք քեզի, ողորմէ՛ քու բանաւոր հօտիդ:

ՔՀԱՅ. - Քու կողմէդ մեղի պարգելուածը քեզի կ'ընծայենք՝ ամէն ինչի եւ բոլորին փոխարէն:

Դպ. - Ամէն բանի համար օրհնեալ ես, Տէր: Կ'օրհնաբանենք քեզ, կը գովաբանենք քեզ, գոհութիւն կը յայտնենք եւ կ'աղաչենք քեզի, Տէր, մեր Աստուածը:

Սրկ. - Օրհնէ՛, Տէր:

ՔՀԱՅ. - Խաղաղութիւն բոլորիդ:

Դպ. - Նաեւ քու հոգիիդ:

Սրկ. - Աստուծոյ երկրպագենք:

Դպ. - Քեզի կ'երկրպագենք, Տէր: Որդի՛ Աստուծոյ, որ Հայրը մեղի հետ հաշտեցնելու համար զոհ մատուցուեցար եւ իբրեւ Կեանքի Հաց կը բաշխուիս մեզի: Քու թափած սուրբ արեանդ միջնորդութեամբ, կ'աղաչենք քեզի, ողորմէ՛ քու արիւնովդ փրկուած հօտիդ:

ՔՀԱՅ. - Որպէսզի ասիկա բոլոր մօտեցողներուս համար առիթ ըլլայ դատապարտութենէ զերծ մնալու եւ՝ մեղերու քաւութեան ու թողութեան:

Դպ. - Հոգի՛ Աստուծոյ, դուն՝ որ երկինքէն կ'իջնես՝ մեր ձեռքով իր լրումին հասցնելու համար քեզի փառակից Որդիին պատարագման խորհուրդը: Ասոր թափած արեան միջնորդութեամբ կ'աղաչենք քեզի, հանգի՛ստ պարզեւէ մեր ննջեցեալներու հոգիներուն:

ՆՍՏԻԼ

ՔՀԱՅ. - Անոնց հետ միասին մեզի՛ ալ ողորմէ, բարերա՛ր Աստուած, կ'աղաչենք:

Դպ. - Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛ մեզի:

ՔՀԱՅ. - Այս Ս. Պատարագով յիշէ Աստուածածին Ս. Կոյսը՝ Մարիամը, Յովհաննէս Մկրտիչը, Ստեփաննոս Նախավկան, եւ բոլոր սուրբերը, կ'աղաչենք:

Դպ. - Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛ մեզի:

Սրկ. - Այս Ս. Պատարագով յիշէ սուրբ առաքեալները, մարգարէները, վարդապետները, մարտիրոսները, եւ բոլոր սուրբ հայրապետները, առաքելագործ եպիսկոպոսները, երէցները, ուղղահաւատ սարկաւագները եւ բոլոր սուրբերը, կ'աղաչենք:

Դպ. - Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛ մեզի:

Սրկ. - Քրիստոսի օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածազարդ յարութեան (կամ ըստ օրուայ խորհուրդին) կ'երկրպագենք:

Դպ. - Փա՛ռք յարութեանդ (կամ ըստ օրուայ խորհուրդին), Տէր:

Սրկ. - Այս Ս. Պատարագով յիշէ մեր առաջնորդներն ու առաջին լուսաւորիչները՝ Թագէսս եւ Բարթողիմէսս առաքեալները, Գրիգոր Լուսաւորիչը, Արիստակէսը, Վրթանէսը, Յուսիկը, Գրիգորիսը, Ներսէսը, Սահակը, Դանիէլն ու Խաղը, Մեսրոպ Վարդապետը, Գրիգոր Նարեկացին, Ներսէս Կլայեցին, Յովհաննէս Որոտնեցին, Գրիգոր եւ Մովսէս Տաթեւացիները, եւ սուրբ Գրիգորներու եւ Ներսէսներու բոլոր հետեւորդները, Հայ ժողովուրդի հովիւներն ու հովուապետները, կ'աղաչենք:

Դպ. - Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛ մեզի:

Սրկ. - Այս Ս. Պատարագով յիշէ սուրբ ճգնաւորները, առաքինասէր եւ աստուածուսոյց կրօնաւորները՝ Պօղոսը, Անտօնը, Պօղը, Մակարը, Ոնոբրիոսը, Աբբա Մարկոսը, Սրաբրիոնը, Նեղոսը, Արմէնը, Եւագը, Պարսամը, Յովհաննէսի եւ Սիմէնի հետեւորդները, Ոսկիի եւ Սուքիասի հետեւորդները, ինչպէս նաեւ բոլոր սուրբ հայրերը եւ աշխարհի բոլոր կողմերուն անոնց աշակերտողները, կ'աղաչենք:

Դպ. - Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ մեզի:

Սրկ. - Այս Ա. Պատարագով յիշէ՛ հաւատացեալ եւ սուրբ թագաւորները՝ Աբգարը, Կոստանդիանոսը, Տրդատը եւ Թէոդոսը, եւ բոլոր սուրբ եւ բարեպաշտ ազգապետներն ու աստուածամէր իշխանները, կ'աղաչենք:

Դպ. - Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ մեզի:

Սրկ. - Այս Ա. Պատարագով նաեւ համընդհանուր կերպով յիշէ՛ բոլոր հաւատացեալները, այր թէ կին, ծեր թէ մանուկ, եւ ամէն տարիքի այն անձերը, որոնք հաւատքով եւ սրբութեամբ Քրիստոսի միացան եւ ննջեցին, կ'աղաչենք:

Դպ. - Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ մեզի:

ՈՏՔԻ

ՔՀՆՅ. - Մանաւանդ յիշէ եպիսկոպոսապետը եւ պատուական հայրապետը Ամենայն Հայոց՝ Տէր Տէր (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսը եւ մեր եպիսկոպոսապետը եւ պատուական հայրապետը Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ՝ Տէր Տէր (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսը, եւ այս թեմի Առաջնորդը՝ Տէր (այս անուն) սրբազան եպիսկոպոսը (կամ արքեպիսկոպոսը): Ծնորհէ որ անոնք երկար ատեն մեզ հովուեն ուղիղ ուսուցումով:

Սրկ. - Գոհութիւն եւ փառաբանութիւն կ'ընծայենք քեզի, ով Տէր, մեր Աստուածը, այս Սուրբ եւ Անմահ Պատարագին համար, որ այս Ա. Սեղանին վրայ դրուած է: Թող ասիկա սուրբ կեանքի պարգեւ ըլլայ մեզի: Ասով՝ սէր, կայունութիւն եւ բաղձացուած խաղաղութիւնը թող շնորհէ ան ամբողջ աշխարհին, Ա. Եկեղեցիին, բոլոր ուղղահաւատ եպիսկոպոսներուն, եպիսկոպոսապետին եւ պատուական հայրապետին Ամենայն Հայոց՝ Տէր Տէր (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսին, եւ եպիսկոպոսապետին եւ պատուական հայրապետին Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ՝ Տէր Տէր (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսին, եւ այս թեմի Առաջնորդին՝ Տէր (այս անուն) սրբազան եպիսկոպոսին (կամ արքեպիսկոպոսին), եւ քահանային (եթէ պատարագիչը եպիսկոպոս է կամ արքեպիսկոպոս՝ յիշել անոր անունը եւ տիտղոսը), որ այս Պատարագը կը մատուցանէ:

Յաղթութիւն շնորհէ քրիստոնեայ պետութիւններուն, բարեպաշտ իշխողներուն եւ անոնց բանակներուն: Աղօթենք եւ խնդրենք նաեւ հանգուցեալ անձերուն եւ մանաւանդ՝ մեր հանգուցեալ հայրապետներուն համար, ինչպէս նաեւ այս սուրբ Եկեղեցին շինողներուն, եւ անոնց հովանիին տակ ննջած մարդոց համար: Ազատութիւն խնդրենք գերեվարուած մեր եղբայրներուն համար, շնորհ՝ այստեղ ներկայ ժողովուրդին, եւ հանգիստ անոնց՝ որոնք հաւատքով եւ սրբութեամբ Քրիստոսի միացան եւ մեռան: Կ'աղաչենք, ասոնք բոլորը յիշէ Ա. Պատարագով:

Դպ. - Բոլորին կողմէ կ'աղաչենք՝ բոլորին համար:

ՔՀՆՅ. - Եւ թող մեր մեծ Աստուծոյն եւ Փրկչին՝ Յիշուս Քրիստոսի սէրը ձեր բոլորին հետ ըլլայ:

ՆՍՏԻԼ

Դպ. - Ամէն: Նաեւ քու հոգիիդ:

Սրկ. - Խարձեալ խաղաղութիւն աղերսենք Տիրոջմէ:

Դպ. - Ողորմէ, Տէր:

Սրկ. - Բոլոր այն սուրբերուն հետ միասին, զորս յիշատակեցինք, առաւել եւս Տիրոջ աղաչենք:

Դպ. - Ողորմէ, Տէր:

Սրկ. - Այս Ս. Սեղանին դրուած Սուբբ եւ Աստուածային, Անմահ Պատարագին միջոցաւ աղաչենք Տիրոջ:

Դպ. - Ողորմէ՛, Տէր:

Սրկ. - Որպէսզի Տէրը, մեր Աստուածը, որ զայն ընդունեց իր սուրբ, երկնային եւ աննիւթական սրբարանին մէջ, անոր փոխարէն Ս. Հոգիին շնորհներն ու պարգեւները դրկէ մեզի, աղաչենք Տիրոջ:

Դպ. - Ողորմէ՛, Տէր:

Սրկ. - Ընդունէ՛ եւ փրկէ՛ մեզ, Տէր. ողորմէ՛ մեզի եւ քու շնորհներովդ պահէ մեզ :

Դպ. - Փրկէ՛ մեզ, Տէր, եւ ողորմէ՛ մեզի :

Սրկ. - Ամենասրբուհի Աստուածածինը՝ միշտ Ս. Կոյս Մարիամը յիշատակելով բոլոր սուրբերուն հետ միասին, Տիրոջ աղաչենք:

Դպ. - Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛ մեզի: Ողորմէ՛, Տէր: Քեզի կը յանձնուինք: Ողորմէ՛, Տէր: Ողորմէ՛, Տէր: Ողորմէ՛, Տէր:

ՈՏՔԻ

ՔՀԱՅ. - Եւ թոյլ տուր, որ համարձակօրէն դիմենք քեզի, ով երկնաւոր Հայր, եւ երգածայն աղօթքով լսենք.

Դպ. - Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի անունդ: Թող գայ արքայութիւնդ. թող կատարուի քու կամքդ. ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ:

ՔՀԱՅ. - Որովհետեւ քուկդ են միշտ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը: Ամէն:

Խաղաղութիւն բոլորիդ:

Դպ. - Նաեւ քու հոգիիդ:

Սրկ. - Աստուծոյ երկրպագենք:

Դպ. - Քեզի կ'երկրպագենք, Տէր:

ՔՀԱՅ. - Քրիստոս Յիսուսի, մեր Տիրոջ միջոցաւ, որուն հետ քեզի՛ Ս. Հոգիիդ եւ Ամենակալ Հօր կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւր. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սրկ. - Ուշադիր ըլլանք:

ՔՀԱՅ. - Տեսէ՛ք Սուբբը, որ սուրբերուն կը տրուի:

Դպ. - Դուն ես միակ սուրբը, դուն ես միակ Տէրը, Յիսուս Քրիստոս, Հայրն Աստուածը փառաւորելու համար: Ամէն :

ՔՀԱՅ. - Օրհնեալ ես, Ս. Հայր, Աստուած ճշմարիտ:

Դպ. - Ամէն :

ՔՀԱՅ. - Օրհնեալ ես, Ս. Որդի, Աստուած ճշմարիտ:

Դպ. - Ամէն:

ՔՀԱՅ. - Օրհնեալ ես, Ս. Հոգի, Աստուած ճշմարիտ:

Դպ. - Ամէն:

ՔՀԱՅ. - Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդիին եւ Ս. Հոգիին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դպ. - Ամէն: Հայր Սուրբ, Որդի Սուրբ, Հոգի Սուրբ : Օրհնութիւն Հօր եւ Որդիին եւ Ս. Հոգիին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Քհնյ. - Սրբութեամբ ճաշակենք մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի սուրբ եւ թանկագին Մարմինէն ու Արիւնէն, որ երկինքէն իջած՝ մեզի կը բաշխուի: Ասիկա Կեանք է, Յարութեան յոյս, եւ մեղքերու քաւութիւն ու թողութիւն: Սաղմո՛ս երգեցէք մեր երկնաւոր, անմահ Թագաւորին, որ քերովբէական կառքի վրայ կը նստի:

ՆՍՏԻԼ

Դպ. - Տէր, ողորմէ. Տէր, ողորմէ. Տէր, ողորմէ. Տէր, ողորմէ:

Սրկ. - Տէր, ողորմէ. Տէր, ողորմէ. Տէր, ողորմէ. Տէր, ողորմէ:

Դպ. - Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Սրկ. - Հիւանդներուն բժշկութիւն, ննջածներուն՝ արքայութիւն:

Կամ՝

Դպ. - Մեղի՛ եկուր, ով մեր հայրերուն Աստուածը, որ Ճնշուածներուն ապաւէնն ես:

Սրկ. - Օգնութեա՛ն փութա ծառաներուդ, եւ օգնակա՛ն հանդիսացիր Հայոց ազգին:

Դպ. - Տէր, ողորմէ. Տէր, ողորմէ. Յիսուս Փրկիչ, մեզի ողորմէ:

Սրկ. - Սուրբ եւ Անմահ այս Պատարագիս միջնորդութեամբ:

Դպ. - Ընդունէ՛ մեր ինդրանքը, Տէր, եւ ողորմէ՛:

Սրկ. - Ով Դպիրներ, սաղմոս երգեցէք Տիրոջ, մեր Աստուծոյն, քաղցր ձայնով հոգեւոր երգեր երգեցէք, որովհետեւ սաղմոս եւ օրհներգութիւն կը վայելեն անոր, ալէլուիաներ եւ հոգեւոր երգեր: Ով սպասարկուներ, երգեցէք եւ սաղմոսեցէք, եւ օրհներգեցէք Տէրը երկինքի մէջ:

ՈՏՔԻ

Դպ. - Օրհնեալ է Աստուած: Քրիստոս իբրեւ զոհ ընծայուելով մեզի կը բաշխուի. ալէլուիա:

Իր Մարմինը մեզի կու տայ իբրեւ կերակուր, եւ իր Ս. Արիւնը կը ցողէ մեր վրայ. ալէլուիա:

Մօտեցէք Տիրոջ եւ իրմէ լոյս առէք. ալէլուիա:

Ճաշակեցէք եւ տեսէք՝ թէ որքա՞ն քաղցր է Տէրը. ալէլուիա:

Օրհներգեցէք Տէրը երկինքի մէջ. ալէլուիա:

Օրհներգեցէք զայն բարձունքներուն մէջ. ալէլուիա:

Օրհներգեցէք զայն, ով անոր հրեշտակները. ալէլուիա:

Օրհներգեցէք զայն, ով անոր բոլոր զօրքերը. ալէլուիա:

Սրկ. - Երկիւղածութեա՛մբ եւ հաւատքո՛վ մօտեցէք եւ սրբութեա՛մբ հաղորդուեցէք:

Հաղորդութիւն

Դպիրները կ'ըսեն. «Ըսէ՛. Մեղայ Աստուծոյ: Կը հաւատանք Հօրը, սուրբ եւ ճշմարիտ Աստուծոյ. Կը հաւատանք Եղմարիտ Աստուծոյ. Կը հաւատանք նաեւ սուրբ Հոգիին, սուրբ եւ ճշմարիտ Աստուծոյ: Կը հաւատանք եւ կը խոստովանինք, թէ ասիկա ճշմարիտ, կենդանի եւ կենդանարար Մարմինն ու Արիւնն է մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որ աշխարհի մեղքը կը վերցնէ»: Եւ ապա պատշաճ տաղ մը կ'երգեն: Յետ հաղորդութեան, դպիրները կ'երգեն.

Դպ. - Մեր Տէրը եւ Աստուածը յայտնուեցաւ մեզի: Օրհնեալ ըլլայ ան՝ որ Տիրոջ անունով կու դայ:

ՔՀԱՅ. - *Փրկէ Տէր, քու ժողովուրդդ, օրհնէ՛ քու ժառանգութիւնդ. հովուէ՛ եւ բարձրացո՛ւր զանոնք, այժմէն մինչեւ յաւիտեան:*

ՆՍՏԻԼ

Դպ. - *Քու բարիքներովդ լիացանք, ով Տէր, Մարմինդ եւ Արիւնդ ճաշակելով: Փա՛ռք քեզի, որ բարձունքներու մէջ կը բնակիս եւ կը կերակրես մեզ: Դուն որ միշտ կը կերակրես մեզ, քու հոգեւոր օրհնութիւնդ զրկէ մեզի: Փա՛ռք քեզի, որ բարձունքներու մէջ կը բնակիս եւ կը կերակրես մեզ:*

Սրկ. - *Դարձեալ խաղաղութիւն աղերսենք Տիրոջմէ:*

Դպ. - *Ողորմէ՛, Տէր:*

Սրկ. - *Մանաւանդ դուք՝ որ հաւատքով ճաշակեցիք աստուածային, սուրբ, երկնային, անարատ եւ անապական այս խորհուրդէն, չնորհակալութիւն յայտնեցէք Տիրոջ:*

Դպ. - *Շնորհակալութիւն կը յայտնենք քեզի, Տէր, որ մեզ կերակրեցիր անմահական քու սեղանէդ, Մարմինդ եւ Արիւնդ բաշխելով աշխարհի փրկութեան եւ հոգիներու կենդանութեան համար:*

ՈՏՔԻ

ՔՀԱՅ. - *Դուն, որ կ'օրհնես քեզ օրհնաբանողները, Տէր, եւ կը սրբագործես քեզի վստահողները:*

Դպ. - *Օրհնեալ է Աստուած:*

ՔՀԱՅ. - *Փրկէ քու ժողովուրդդ, օրհնէ՛ քու ժառանգութիւնդ. քու Եկեղեցիդ ամբո՛ղջ պահէ:*

Դպ. - *Ամէն:*

ՔՀԱՅ. - *Սրբագործէ ասոնք, որոնք սիրով յօժարեցան քու տունդ վայելուչ պահել: Փառաւորէ մեզ աստուածային քու զօրութեամբդ, եւ մի՛ լքեր քեզի ապաւինողներս:*

Դպ. - *Ամէն:*

ՔՀԱՅ. - *Քու խաղաղութիւնդ պարգեւէ ամբողջ աշխարհին. Եկեղեցիներուն, քահանաներուն, քրիստոնեայ ղեկավարներուն, Հայոց ազգի Հայրապետութեան եւ Հանրապետութեան, մեր բանակին եւ մեր ամբողջ ժողովուրդին:*

Դպ. - *Ամէն:*

ՔՀԱՅ. - *Որովհետեւ բոլոր բարի բաները եւ բոլոր կատարեալ պարգեւները երկինքէն՝ քեզմէ՛ կու գան, ով Հայր, որ լոյսի արարիչն ես: Եւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

Դպ. - *Ամէն: Տիրոջ անունը օրհնեալ ըլլայ այժմէն մինչեւ յաւիտեան: Տիրոջ անունը օրհնեալ ըլլայ այժմէն մինչեւ յաւիտեան: Տիրոջ անունը օրհնեալ ըլլայ այժմէն մինչեւ յաւիտեան:*

ՔՀԱՅ. - *Դուն, որ Օրէնքին եւ մարգարէութեանց լրումն ես, ով մեր Աստուածն ու Փրկիչը՝ Քրիստոս, եւ Հօր կամքով իրենց կատարումին հասցուցիր բոլոր տնօրինութիւնները, Ա. Հոգիո՛վդ լեցուր մեզ:*

Սրկ. - *Ոտքի՛:*

ՔՀԱՅ. - *Խաղաղութիւն բոլորիդ:*

Դպ. - *Նաեւ քու հոգիիդ:*

Սրկ. - *Երկիւղածութեամբ մտիկ ըրէք:*

ՔՀԱՅ. - *Ցիսուս Քրիստոսի սուրբ Աւետարանը ...ի համաձայն:*

Դպ. - *Փառք քեզի, ով Տէր, մեր Աստուածը:*

Սրկ. - Ուշադիր ըլլանք:

Դպ. - Աստուած կը խօսի:

Քահանան կը կարդայ արձակման Աւետարանը:

Սրկ. - Փա՛ռք քեզի, ով Տէր մեր Աստուածը:

Ս. Խաչին ապաւինելով աղաչենք Տիրոջ, որ անով մեզ ազատէ մեր մեղքերէն, եւ իր ողորմութեամբը փրկէ :

Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Քհնյ. - Քրիստոս, մեր Աստուածը, Սուրբ եւ Պատուական Խաչիդ հովանիին տակ՝ խաղաղութեան մէջ պահէ մեզ: Փրկէ՛ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն, եւ արժանի դարձուր՝ գոհութեամբ փառաւորելու քեզ, Հօր եւ Ս. Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դպ. - Պիտի օրհներգեմ Տէրը ամէն ժամ. շրթներս պիտի չդադրին ամէն ժամ անոր փառաբանութիւնը երգելէ:

Քահանան Աւետարանով կը խաչակնիք ծողովուրդը ըսելով.

Օրհնեալ ըլլաք Ս. Հոգիին շնորհներով: Խաղաղութեամբ գացէք, եւ Տէրը ձեր բոլորին հետ ըլլայ. ամէն:

Ժողովուրդը մէկ առ մէկ կը մօտենայ եւ կը համբուրէ Աւետարանը, ըսելով.

«Թող Տէրը յիշէ պատարագդ, եւ ուխտերդ ընդունելի ըլլան»:

Քահանան կը պատասխանէ.

«Տէրը սրտիդ համաձայն տայ, եւ բոլոր խնդրանեներդ կատարէ»:

Եւ ժողովուրդը կը մեկնի խաղաղութեամբ: